ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ (16.01.2023թ.-15.06.2023թ.) ԵՎ ԵՐԵՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐԻ (26.06.2023թ.; 11.07.2023թ.; 13.07.2023թ.) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման հինգերորդ նստաշրջանի աշխատանքները սկսվել են 2023 թվականի հունվարի 16-ին և ավարտվել հունիսի 15-ին:

Գումարվել է՝

- 8 հերթական,

- 2 արտահերթ նիստ՝ ապրիլի 18-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ, ապրիլի 25-ին՝ Կառավարության նախաձեռնությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 3 արտահերթ նստաշրջան՝ հունիսի 26-ին՝ Կառավարության նախաձեռնությամբ, հուլիսի 11-ին՝ Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնությամբ և հուլիսի 13-ին՝ Կառավարության նախաձեռնությամբ:

Ազգային ժողովն ընդունել է 273 օրենք, որից՝

- 5-ը «մայր» օրենքներ են՝ (**«Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների մասին», «Գեոդեզիական և քարտեզագրական գործունեության մասին», «Տարածական տվյալների մասին», «Պետական գաղտնիքի մասին», «Կամավոր աշխատանքի մասին»**):

- 255՝ փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում,

- 13՝ օրենք-համաձայնագրեր:

Այդ ժամանակահատվածի ընդունված օրենքներից 248-ի հեղինակը Կառավարությունն է, 25-ինը՝ Ազգային ժողովի պատգամավորները:

Ընդունված օրենքներից 24-ինը գլխադասային է համարվել Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը, 11-ինը՝ Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովը, 2-ինը՝ Արտաքին հարաբերությունների հարցերի մշտական հանձնաժողովը, 18-ինը՝ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովը, 24-ինը՝ Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը, 100-ինը՝ Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը, 1-ինը՝ Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, 7-ինը՝ Տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովը, 37-ինը՝ Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովը, 44-ինը՝ Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը և 5-ինը՝ Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային ժողովը՝

- **ընտրել է՝**

- Հաշվեքննիչ պալատի անդամ (Գագիկ Բարսեղյան),
- Մարդու իրավունքների պաշտպան (Անահիտ Մանասյան),

- Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ (Սարգիս Խանդանյան)
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թեկնածու (Ելիզավետա Դանիելյան),
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորի թեկնածու (Լիզա Գրիգորյան),
- Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թեկնածու (Սերգեյ Մեղրյան),

- **նշանակել է՝**

- Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ (Արամայիս Փաշինյան),

- Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ (Սերգեյ Աղինյան):

- **որոշմամբ հաստատել է՝**

- Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

- **լսել է և ընդունել է ի գիտություն՝**

- Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի 2022 թվականի գործունեության եւ տեսալսողական մեդիայի ոլորտում

տեղեկատվության ազատության վիճակի մասին տարեկան հաղորդումը,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին» զեկույց,
- Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում,
- Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում,
- ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդում

- Ազգային ժողովը քննարկել է գլխավոր դատախազի միջնորդագրերը և ընդունել որոշումներ երեք պատգամավորների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին (Սեյրան Օհանյան, Արմեն Չարչյան, Միեր Սահակյան):